

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 41/8

ք.Երևան

13 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 19.04.2018թ. N3100051 ստուգման ակտի դեմ անհատ ձեռնարկատեր Վահան Դիլոյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Վահան Դիլոյանը հայտնում է, որ 2017 թվականի նոյեմբեր ամսին հաշվառվել է հարկային մարմնում՝ որպես անհատ ձեռնարկատեր և գործունեություն է սկսել զովացուցիչ ըմպելիքների արտադրության ոլորտում: Արտադրված ապրանքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրոշմավորելու նպատակով Ա/Ձ Վահան Դիլոյանը 2017 թվականի դեկտեմբերին դիմել և հարկային մարմնից ստացել է 11500 հատ դրոշմապիտակ: Քանի որ ԱՁ-ի կողմից արտադրվող ապրանքը լինելու էր բացառապես մեկ լիտրանոց զովացուցիչ ըմպելիքներ, դրոշմապիտակների ձեռքբերման հայտի «Գ.Տարողությունը» սյունակում լրացվել է «Լիտր (Լ)»: Ա/Ձ Վահան Դիլոյանը նշում է, որ «Լիտր» նշումն ինքնին նշանակում է «մեկ լիտր», քանի որ «լիտր»-ը հոգնակի գոյական չէ և միավոր (մեկ) եզակի թվից տարբերվելու հանգամանքում կատարվում է քանակական, թվական լրացում (օրինակ՝ 2 լիտր):

Միաժամանակ, Ա/Ձ Վահան Դիլոյանն անընդունելի է համարում, որ հարկային մարմնի ծրագրային խնդիրների հետևանքով պետք է տուգանքի ենթարկվեն հարկ վճարողները, որոնք պատշաճ ձևով կատարել են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված պահանջը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրոշմապիտակների ձեռքբերման հայտում պատշաճ կերպով ներկայացվել է ապրանքի տարողության վերաբերյալ տեղեկատվությունը՝ Ա/Ձ Վահան Դիլոյանը խնդրում է չեղյալ համարել ՕՀՎ աշխատակիցների կողմից կազմված N3100051 ստուգման ակտը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 28.03.2018թ. N3100051 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Վահան Դիլոյանի մոտ կատարվել է ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 19.04.2018թ. N3100051 ստուգման ակտը (այսուհետ նաև՝ Ակտ): Համաձայն Ակտի՝ Ա/Ձ Վահան Դիլոյանը ս/թ-ի ապրիլի 10-ին խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի 394-րդ հոդվածի պահանջները, Ա/Ձ Աիդա Վարդանյանին (ՀՎՀՀ 49599569) է իրացրել 20 շիշ «Լենինական» անվանումով զովացուցիչ ըմպելիք 1.0 լիտր տարողության, մեկ շիշ արժեքը 110 դրամ, ընդհանուր արժեքով 2200 դրամ: «TAX STEMP» համակարգով ստուգումից պարզվեց, որ դրանց վրա փակցված էին Ա/Ձ Վահան Դիլոյանին տրամադրված

զովացուցիչ ըմպելիքի համար նախատեսված դրոշմապիտակներ, որոնցում բացակայում էր տարրողության (լիտրաժ) մասին նշումը: ՀՀ հարկային օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Ա/Ձ Վահան Դիլոյանի նկատմամբ հաշվարկվում է տուգանք 500.000 դրամի չափով:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 394-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դրոշմավորման ենթակա ապրանքի վրա պետք է փակցված լինի չվնասված, ամբողջական ակցիզային դրոշմանիշ և (կամ) դրոշմապիտակ, որոնց գծով էլեկտրոնային եղանակով կատարված գրանցումները պետք է համապատասխանեն դրոշմավորման ենթակա ապրանքի տեսակին, ենթատեսակին (նկարագրին), տարրողությանը (ծավալին, քաշին կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորին) և էլեկտրոնային եղանակով գրանցված սերիային ու համարին:

ՀՀ հարկային օրենսգրքի 424-րդ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների՝ մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ առանց դրանց վերաբերյալ սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարման կամ ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների գծով էլեկտրոնային եղանակով կամ Օրենսգրքի 393-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով կատարված գրանցումներին չհամապատասխանող դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարելու դեպքում, եթե օտարման համար նախատեսված վայրում գտնվող այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ նշված չլինելու դեպքում՝ Օրենսգրքով սահմանված կարգով որոշված) գներով՝ չի գերազանցում 50 հազար դրամը, ապա Օրենսգրքի 391-րդ հոդվածով սահմանված՝ դրոշմավորման պարտավորություն կրող անձը վճարում է տուգանք՝ 500000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Վահան Դիլոյանի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է ՀՀ տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա որոշ ապրանքների համար դրոշմապիտակների ձեռք բերման հայտը, որի «9. Տարրողությունը» սյունակում լրացվել է «Լիտր (լ)»:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Վահան Դիլոյանի կողմից իրացվել են զովացուցիչ ըմպելիքներ, որոնց տարրողությունը եղել է 1.0 լիտր, ինչպես նաև այն, որ Ա/Ձ Վահան Դիլոյանի կողմից 1.0 լիտրից բացի այլ տարրողության զովացուցիչ ըմպելիքներ չեն արտադրվում, Հանձնաժողովը գտնում է, որ դիմում-բողոքը ենթակա է բավարարման:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Վահան Դիլոյանի դիմում-բողոքը բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 19.04.2018թ. N3100051 ստուգման ակտը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ